ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» սեպտեմբերի 2024թ. № 906

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-ին հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով 2024 թվականի օգոստոսի 30-ի վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի 2024 թվականի օգոստոսի 19-ի 64/8-1775 և 2024 թվականի օգոստոսի 26-ի թիվ 64/8-1807 գրությունները և լուսանկարը, հաշվի առնելով, որ անհատ ձեռնարկատեր Գևորգ Պողոսյանը 2024 թվականի օգոստոսի 19-ին, ժամը 13:28-ին Սպիտակ քաղաքի Ալ. Մանուկյան փողոցում, չթույլատրված վայրում՝ հետիոտնի համար նախատեսված մայթի վրա և «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5[1]-ին հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտմամբ իրականացրել է մրգերի և բանջարեղենի բացօթյա առևտուր՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Գևորգ Պողոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի չափով՝ 70 000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել անհատ ձեռնարկատեր Գևորգ Պողոսյանին:

3. Անհատ ձեռնարկատեր Գևորգ Պողոսյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ Սպիտակ համայնքի 900245161063 գանձապետական հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գևորգ Պողոսյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը վարչական կարգով կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 13
ք. Սպիտակ